ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2017 թվականի N 212-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Փայլակ Միքայելյանը՝ հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2016 թվականի դեկտեմբերի 1-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29.1 հոդվածը, Փայլակ Միքայելյանը մարել էր գույքահարկի պարտավորության 20 տոկոսը և կնքել գույքահարկի պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց վեց ամիս ժամկետով:

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 12-ին տրված N 232561241270093409 տեղեկանքի Փայլակ Միքայելյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է հարկային պարտավորությունները 2014-2016 թվականների համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Փայլակ Միքայելյանի նկատմամբ 2016 թվականի դեկտեմբերի 1-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղարը:
4. Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Փայլակ Միքայելյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հոկտեմբերի 2017 թվականի N 213-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սվետլանա Սերգեյի Սարգսյանի (ծնված՝ 1985 թվականի հունվարի 1-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել միավորելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 47-րդ փողոցի թիվ 21 և թիվ 23 հողակտորները, միասնական գույքի գործառնական նշանակությունը փոխելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորից բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի և օրինականացնելու նշված հողակտորում 2017 թվականին ինքնակամ կառուցված շինությունները՝ (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ NN 11072017-07-0007, 11072017-07-0030, տրված 2017 թվականի հուլիսի 11-ին, «ԱՍՏԱ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 9-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) 1306,73 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՍՏԱ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սվետլանա Սերգեյի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 47-րդ փողոցի թիվ 21 և թիվ 23 հողակտորներում առկա են ինքնակամ կառուցված գլխավոր մասնաշենք, աստիճան, պահակակետ և պարիսպ՝ 1306,73 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9, 10, 11, 15, 17 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սվետլանա Սերգեյի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 47-րդ փողոցի թիվ 21 և թիվ 23 հողակտորներում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Սվետլանա Սերգեյի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 47-րդ փողոցի թիվ 21 և թիվ 23 հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 47-րդ փողոց, թիվ 21-23:

2. Սվետլանա Սերգեյի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 47-րդ փողոցի թիվ 21-23 հասցեի միավորված գույքի՝ 2000,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի հասարակական կառուցապատման:

3. Սվետլանա Սերգեյի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 47-րդ փողոցի թիվ 21-23 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված 1306,73 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով շինությունները համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 6 794 996 (վեց միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար ինը հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ սույն որոշման երկրորդ կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հոկտեմբերի 2017 թվականի N 214-Ա

## ՄԱՐԻՑԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԵՍԱՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարիցա Գուրգենի Եսայանի (ծնված՝ 1950 թվականի հուլիսի 5-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել ճանաչել իր սեփականության իրավունքը Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 17 հասցեի՝ իր կողմից փաստացի օգտագործվող 640,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ և օրինականացնել նշված հողակտորում (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2017 թվականի մարտի 24-ին, «Պիկետ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 10-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) իր կողմից ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Պիկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարիցա Գուրգենի Եսայանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 17 հասցեի հողամասում 1988-1995 թվականներին ինքնակամ կառուցել է այգետնակ և օժանդակ շինություն՝ 432,72 քառ.մ ընդհանուր արտաքին մակերեսով և փաստացի օգտագործվող հողամասի չափը կազմում է 640,0 քառ.մետր:

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մարիցա Գուրգենի Եսայանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, հաշվի առնելով այն, որ Մարիցա Գուրգենի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 17 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մարիցա Գուրգենի Եսայանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 17 հասցեի՝ փաստացի օգտագործվող 640,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ, որն իր կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Մարիցա Գուրգենի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական 27-րդ թաղամասի թիվ 17 հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 16
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2017 թվականի N 215-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Արթուր Սարգսի Այվազյանի ընտանիքի խնդրանքը, ***որոշում եմ.***

Արթուր Սարգսի Այվազյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 19-րդ փողոցի թիվ 56 հասցեից բաժանված 496,6 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 19-րդ փողոց, թիվ 56 և 336,9 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 19-րդ փողոց, թիվ 56/2:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 17
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2017 թվականի N 216-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջանվել Ջումշուդի Զոհրաբյանի (ծնված՝ 1948 թվականի հոկտեմբերի 30-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 14 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 721422, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2001 թվականի մայիսի 18-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 19-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները և թվով երեք բացվածքները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ջանվել Ջումշուդի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 14 հասցեի տնամերձ հողամասում 2012 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 47,48 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 26,76 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 2,05 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 2,48 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 3,50 քառ.մետր, անասնաշենք՝ 14,89 քառ.մետր, անավարտ շինություն՝ 15,41 քառ.մետր արտաքին մակերեսներով և ինքնակամ բացվել է երեք բացվածք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ջանվել Ջումշուդի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 14 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ բացվածքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները և բացվածքները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ջանվել Ջումշուդի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 13-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 14 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացվածքները համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 268 970 (երկու հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 17
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2017 թվականի N 217-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի «Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 65-Ա որոշմամբ հաստատված N 9 հավելվածում 17)-րդ կետից հետո լրացնել նոր 17[1]) կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«17[1])հսկողություն է իրականացնում ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնների պահպանմանը, կանաչ գոտիների պահպանությանը, աղբահանության աշխատանքները ժամանակին կազմակերպմանը, չսահմանված վայրում աղբի թափման, աղբահանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը և առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, խախտումներ թույլ տված իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու.»:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 17
գ. Ջրվեժ